

**1.2.2. Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2004թ. հունվար-հոկտեմբերին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 389.1 մլրդ.դրամ, որը 2003թ. մակարդակը գերազանցել է 13.8%-ով: 2004թ. հոկտեմբերի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է. սեպտեմբերի 110.2%-ը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ուղղությունների ունի հետևյալ պատկերը՝ բուսաբուծության համախառն արտադրանքը կազմում է 235.9 մլրդ. դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 18.2%-ով: Բուսաբուծության համախառն արտադրանքի աճը պայմանավորված է բոլոր գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքի ծավալների ավելացմամբ: Առավել բարձր համախառն բերքի աճ են ապահովել հացահատիկային և հատիկալընդեղենային մշակաբույսերը՝ 145.2 հազ. տոննա կամ 46.8% և խաղողը՝ 63.3 հազ. տոննա կամ 77.6%:

Անասնաբուծության համախառն արտադրանքը կազմում է 153.2 մլրդ. դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 7.7%-ով:

**Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2004թ. նոյեմբերի 1-ի դրությամբ**

*(հաշվարկային տվյալներ)*

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) <sup>1</sup> , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %
ք.Երևան	0.3	100.0	3.6	116.1	38.0	83.9
Արագածոտն	7.8	106.8	60.3	107.1	24.3	103.8
Արարատ	6.3	105.0	39.0	107.1	36.5	105.5
Արմավիր	7.7	104.1	33.8	107.6	35.2	106.7
Գեղարքունիք	11.2	104.7	93.0	107.4	36.2	111.4
Լոռի	7.2	105.9	61.6	107.7	26.3	137.7
Կոտայք	8.0	119.4	53.6	108.1	208.3	130.8
Շիրակ	9.9	105.3	78.4	107.8	33.6	107.3
Սյունիք	5.9	113.5	44.5	108.3	12.9	104.0
Վայոց ձոր	2.5	104.2	19.8	107.6	11.1	113.3
Տավուշ	5.4	103.8	35.9	107.5	18.1	91.0
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>72.2</b>	<b>107.1</b>	<b>523.5</b>	<b>107.7</b>	<b>480.5</b>	<b>114.3</b>

2004թ. հունվար- հոկտեմբերին անասնի և թռչնի իրացումը գերազանցել է 2003թ. ցուցանիշը 4.8 հազ. տոննայով կամ 7.1 %-ով, կաթի արտադրությունը՝ 37.3 հազ. տոննայով կամ 7.7 %-ով, ձվինը՝ 60.0 մլն. հատով կամ 14.3 %-ով:

<sup>1</sup> Ներառյալ ներքին սպառումը:

Հանրապետությունում շարունակվում է աշնանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները: Օպերատիվ տվյալներով 01.11.2004թ. դրությամբ կատարվել է 95332 հեկտար աշնանացան մշակաբույսերի ցանք, 2003թ. նույն ժամանակաշրջանի 84809 հեկտարի դիմաց կամ 10523 հեկտարով ավել:

**Աշնանացանի ընթացքը հանրապետությունում, մարզերի կտրվածքով,  
2004թ. նոյեմբերի 1-ի դրությամբ**

*(հեկտար)*

	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %
ք.Երևան	80	123.1
Արագածոտն	8000	100.4
Արարատ	4827	119.0
Արմավիր	10920	103.7
Գեղարքունիք	15800	152.8
Լոռի	6732	92.2
Կոտայք	8305	118.7
Շիրակ	20135	97.7
Սյունիք	16194	135.3
Վայոց ձոր	1370	102.0
Տավուշ	2969	81.8
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐ</b>	<b>95332</b>	<b>112.4</b>